

Կոնդակ ընդհանրական Շամախու վիճակի հոգևորական դասի, հոգաբարձութեանց, երեսփոխանների, վաճառականների և այլ դասակարգի անունով, որով յայտնելով եպիսկոպոսի թեմի առաջնորդ կարգուելը՝ յորդորուեց, որ աշակցութիւն ցոյց տան նորան, որպէս զի կարողանայ կատարել իւր վրայ զրած պարտականութիւնները: 31 մայիսի, թ. 800:

ՆՈՐԻՆ ՎԵՂԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

Կոնդակ Սուամիւնիայի Կոնստանցա քաղաքի Ներսէս քահանայ Առաքելեանի անունով, որով, հոգևոր հովիւ Տ. Գնէլ եպիսկոպոսի միջնորդութեան համաձայն, քահանայական լանջախաչ կրելու իրաւունք շնորհուեց: 14 մայիսի, թ. 710:

Կոնդակ Տփլիսի էջմիածնեցոց ս. Գէորգ եկեղեցու միաբան Ղևոնդ քահանայ Մամիկոնեանի անունով, որով, Տփլիսի Առաջնորդի միջնորդութեան համաձայն, աւագ քահանայութեան պատիւ շնորհուեց: 14 մայիսի, թ. 711:

ՍԻՆՕԳԻ ՕՐԱԳՐԵՐԻՑ ՔԱՂՈՒԱԾՆԵՐ

Սինօղը՝ լսելով Ղարաբաղի Կոնսիստորիայի անցած տարուայ նոյեմբերի 27-ի, № 3763 յայտարարութիւնը՝ ուսուցիչ Արտաշէս Տէր-Յովսէփեանին Կախ-Աւանի վրայ հեռացած Մեկթիսեղեկ քճնյ. Սլղրեանի զիտարէն քճնյ-ձեռնագրելու մասին, որոշեց. մերժել Կոնսիստորիայի միջնորդութիւնը Արտաշէս Տ. Յովսէփեանին Կախ-Աւանի վրայ քճնյ. ձեռնագրելու մասին և պատուիրել կարգադրել, որ Սլղրեան քահանան մնայ Կախ-Աւանում և հովուէ ալլ տեղի իւր ծխականներին: 10 մայիսի, թ. 193:

Սինօղը՝ քննութեան առնելով Աղէքսանդրոպոլի Ղևոնդ քճնյ. Մամնիշեանի, գաւառի Ղազանչի գիւղի Մկրտիչ քճնյ. Թևանեանի, Փորը-Պարնի գիւղի Ներսէս քճնյ. Թորոսեանի և

Դեպքերն ընդհանրապես քնն. Անասնեանի մեղադրական գործը կաթողիկե հայերի պատկերներ կատարելու մէջ, որոշեց. 1913 թ. փետրուարի 21-ի ամենատորքով. հրովարտակի գորութեամբ կարճել յիշեալ քահանայները դէմ յարուցած մեղադրական գործը և ազատել նրանց պատասխանատուութիւնից. 10 մայիսի, թ. 194:

Սինոդը՝ համաձայն Աստրախանի կոնսիստորիայի միջնորդութեան, որոշեց. թոյլ տալ Աստրախան քաղաքի ս. Յարութեան եկեղեցու ծխականներին դէպի գերեզմանատունը ջրմուղ տանելու համար ծախսել եկեղեցու գումարներից 3000 ռուբլի. 12 մայիսի, թ. 198:

Սինոդը՝ քննութեան առնելով Լոռուայ գաւ. Հագուա գիւղի վերայ ձեռնադրուած Եսայի քնն. Տէր Առաքելեանցին Աղէքսանդրոս. գաւ. Ղչաղ գիւղը փոխադրելու վերաբերեալ գործը, որոշեց. համաձայն կոնսիստորիայի եզրակացութեան, մերժել Եսայի քնն. փոխադրութեան խնդիրը, խստիւ պատուիրելով Երևանի կոնսիստորիային, որ յիշեալ քահանան վերադառնայ Հագուա և հովուէ իւր ծխականներին. պատուիրել նաև Վրաստանի կոնսիստորիային առ սչինչ համարել Եսայի քահանայի արձակման թուղթը և հսկել, որ նա հաստատուէ Հագուայում և շարունակէ իւր ծխի հովուութիւնը. 16 մայիսի, թ. 203:

Սինոդը՝ Աստրախանի կոնսիստորիայի միջնորդութեան համաձայն, քննութեան առաւ Վլադիկաւկազի վերաբնակիչ հրէայ Մարիա Վլադիսլաւսկու խնդիրը, հետեւելի վերաբերմամբ. խնդրատուն հայ-լուսաւորչականի հետ պսակուելու նպատակով ընդունել է հայազաւանութիւն, սակայն հանդամանքների փոփոխութեան պատճառով պսակուել է հրէայի հետ, որից ունեցել է մի զաւակ. այժմ սակայն նա մարդուց բաժանուած, ասլոււմ է իւր երեխայի հետ և խնդրում է բացատրել. ա) նրա ամուսնութիւնը հրէայի հետ օրինական է, թէ ոչ. բ) ճւղ է պատկանում երեխան. կարճ է մկրտել տալ նրան առանց հօր հաճութեան. և գ) կարճ է նա այժմ համարուել քրիստոնեայ և ինչպէս

է վարուելու. Սինօզը որոշեց, յայտնել խնդրատու Մարիամ Վլադիսլավսկուհուն, որ նրա ամուսնութիւնը հրէայ Լեինի հետ՝ համաձայն X հատ. 1 մ. 37 յօդ. համարում է անվաւեր, այդ ամուսնութիւնից ծնուած երեխան կարող է մկրտուել մօր դաւանութեան ծիսով և խնդրատուն իբրև հայ դաւանութեան ծիսով արգէն մկրտուած, մնում է քրիստոնեայ՝ համարուելով հայ եկեղեցու անդամ: 19 մայիսի, թ. 205:

Սինօզը՝ քննութեան առնելով Տփլիսի Մէյդանի ս. Գէորգ եկեղեցու հոգաբարձուներ՝ Սեդրակ Յարութիւնեանի, Յովսէփ Ստեփանեանի և Գրիգոր Արէշեանի բողոքը Վրաստանի թեմի առաջնորդ Տ. Մեսրոպ եպիսկոպոսի դէմ նրանց պաշտօնից անկանոն կերպով արձակելու համար, որոշեց, ի նկատի ունենալով, որ ծխական երկրորդ ժողովը՝ քննելով հոգաբարձուների զործունէութիւնը, որոշել է նրանց արձակուած համարել և նոր ընտրութեամբ ընտրել է հոգաբարձական նոր կազմ, որոնք և հաստատուել են առաջնորդի կողմից, թողնել անհետևանք հոգաբարձուների բողոքը: 19 մայիսի, թ. 208:

Սինօզը՝ ստանալով Պետերբուրգից իշխան Նիկողիմոս Ամատունու միջոցով ուղարկուած Պետերբուրգի հայ գաղութի մէջ հանգանակուած 11,264 ո. 25 կոպ., որոշեց. համաձայն Ն. Ամատունու գրութեան այդ գումարի կէսը 5632 ո. 12½ կոպէկ յանձնել Օշական գիւղի «Մեսրոպեան զպրօցի շինարարական յանձնաժողովին, իսկ մնացած կէսը ընդունել յօգուտ զպրօցական ֆօնդի, որի համար շնորհակալական թուղթ գրել իշխան Ն. Ամատունուն: 19 մայիսի, թ. 210:

Սինօզը՝ Երևանի նահանգապետի համաձայնութիւնն ստանալով, որոշեց. թոյլ տալ Աղէքսանդրոպոլի գաւ. Ղազարապատ գիւղի ծխականներին վերաշինել գիւղի աղօթատունը՝ ծախսելով հաստատուած յատակագծի և նախահաշուի համաձայն 3000 ուրլի: 21 մայիսի, թ. 211:

Սինօզը՝ ի լրումն իւր անցեալ տարուայ մարտի 3-ի օրագրական վճռի, հետևեալ որոշումն արաւ Արդուինի

Դրիգոր քչյ, Եսայեանի վերաբերմամբ. պատուիրել վրաստանի կոնսիտորիային ի կատար ածել յիշեալ քահանայի վերաբերմամբ Սինոդի 1913 թ. մարտի 3-ի որոշումը և հեռացնել նրան Արդուինից այս ուսումնական տարին վերջանալուց յետոյ, նշանակելով մի այլ տեղ, անկախ դրանից՝ կարգադրել, որ Արդուինի համար նոր քահանայացու ընտրուի: 21 մայիսի, թ. 215:

Սինոդը՝ ի նկատի առնելով, որ հանգուցեալ Միրզաջան Խաչատրեանի կտակի երկրորդ կէտի զօրութեամբ կտակարարի այրին պէտք է ստանայ տարեկան 2500 ռուբլի կտակազուժարի $\frac{0}{10}$ -ից, և կամենալով այդ գումարի հատուցումը ընդմիշտ կանոնաւորել, որոշեց. պատուիրել Մ. Աթոռի կալուածոց կառավարիչ Լ. Տ. Աւետիքեանին կալուածոց արդիւնքից վճարել ամեն տարի 2 նուազում տարուայ սկզբին և յուլիսի 1-ին Միրզաջան Խաչատրեանի այրուն տարեկան 2500 ռուբլի և այս մասին ստացական ստանալով ուղարկել Սինոդիս վճարուած գումարը կտակած զրամագլխի տոկոսներից հանելու և ելք գրելու համար: 23 մայիսի, թ. 217:

Սինոդը՝ քննութեան առնելով Սուրմալու գաւառի Բլուր դիւղի ընծայացու Կիրակոս Պետրոսեանի քահանայ ձեռնադրուելու վերաբերեալ գործը և ի նկատի ունենալով, որ նա, թէև ձեռք է բերել Երևանի թեմական դպրոցի Դ. դասարանի առարկաներից վկայական, սակայն՝ Սինոդի ատեանում քննութեան ենթարկուելով, ցոյց տուաւ անբաւարար գիտութիւն, որոշեց. մերժել Կիրակոս Տէր Պետրոսեանի խնդիրը նրան քչյ. ձեռնադրելու վերաբերմամբ: 23 մայիսի, թ. 219:

Սինոդը՝ Երևանի նահանգապետի համաձայնութիւն ստանալով, որոշեց. թոյլ տալ Աղէքսանդրոպ. գաւ. Մեծ-Քէլթի գիւղի եկեղեցու շինութիւնը՝ հաստատուած յատակագծի համաձայն. (Օրէնք. Շինար. Կանոն. 143 յօդ.): 26 մայիսի, թ. 227:


Սինոդը՝ Վեհափառ-Կաթողիկոսի մակագիր պատուէրի

համաձայն քննութեան անուր փաղարշապատի վերաբնակիչ Չիչակ Պօղոսեանի խնդիրը, որով յայտնում է, թէ Տաճկահայտանում քրդերից անուանուելով, բռնութեամբ մահ մեղականացել է և ամուսնանալով քրդի հետ ունեցել է զաւակներ, սակայն փախչելով ամուսնուց, կամենում է վերստին դառնալ հայ դաւանութեան և մկրտել իւր երեխաներին, որոշեց. Օր. XI հատ. 1 մ. 11 յօդ. և 1141 յօդ. 16 կէտի համաձայն ընդունել խնդրատու Չիչակ Պօղոսեանին հայ եկեղեցու ծոցը և պատուիրել Վաղարշապատի գործակալին երեք ամսուայ պաշխարանքից յետոյ խոստովանեցնել և հաղորդել նրան, իսկ երեխաներին մկրտելով, տեղեկութիւն տալ կոնսիստորիային: 23 մայիսի, թ. 224:

Սինօզը՝ քննութեան անուելով Սարկովի վերաբնակիչներ Վարդան և Լուիզա Արզարեան ամուսինների պատկերում մահ գործը, և ի նկատի ունենալով, որ մեղադրուող կինը, Լուիզա Բերնարդովա, ծնեալ Գունցիկերը, պատկանում է քողոքական դաւանութեան, որոշեց. Օրինաց XVI հատ. 2 մաս. (հրատ. 1892 թ.) 455 յօդ. և Արզարադատութեան նախարարութեան 1910 թ. դեկտեմբ. 24-ի, № 64287 շրջաբերականի համաձայն այդ գործը Սինօզիս դատին ենթակայ համարելով, պատուիրել Աստրախանի կոնսիստորիային կարճել այդ գործը և հրահանգել նոյն կոնսիստորիային, որ խոսն պատկանելի լուծման գործերը ենթակայ են պատասխանատու կողմի դաւանութեան հոգևոր իշխանութեան: 26 մայիսի, թ. 229:

Սինօզը՝ լսելով Շամախու կոնսիստորիայի այս տարուայ մայիսի 5-ի, № 1189 յայտարարութիւնը, որով միջնորդում է Ախալցխայի վիճ. Ծուղբուտ գիւղացի Յովհաննէս Աղամեանին հոգևոր կոչման մէջ ընդունել և ձեռնադրել Դերբենտի ս. Ամենափրկիչ եկեղեցու զպիր՝ ի արիտուր նոյն եկեղեցում արած բազմամեայ սպասաւորութեան, որոշեց. ի նկատի ունենալով, որ ընծայացու Աղամեանի երկդասեան դպրոցից ստացած վկայականը չի համապատասխանում ծխական կանոնադրութեան 59 յօդուածի և 1907 թ. մարտի 23-ի, № 515 կոնդակի պահանջներին,

մերժել կոնսիտորիայի միջորդութիւնը Ադամեանին հոգևոր կոչման մէջ ընդունելու և Դերբենախ եկեղեցում դպր կարգելու վերաբերմամբ: 26 մայիսի, թ. 228:



ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՆԵՐՄԱՆ ՍՐԺԱՆԱՅԱԾՆԵՐ:

Վերջին տարիները զանազան տեղերից թէ բանտարկուածներն իրենք և թէ արանց թշուառ ընտանիքներն ու ծնողներն դիմում էին Ազգիո Վեհափառ Հայրապետին՝ խնդրելով արկանել իրենց աղերսներն առ ռոս Նորին Կայսերական Մեծուքեան՝ արժանացնելու ամենատղորմած Բարձրագոյն ներման: Հայ թրքական ընդհարումներից յետոյ հայերից մեծ թուով մեղադրուեցին իբր Փաշակցական կուսակցութեան պատկանելուն համար:

Նրանց դատեցին 1912 թ. սկզբներում Պետերբուրգում Սենատի առանձին դատարանով. շատերը արդար ճանաչուեցին, իսկ ոմանք ենթարկուեցին պատժի, մինչև անգամ տաժանակիր աշխատանքի, թողնելով իրենց յետևից դժբախտացած ընտանիքներ և ծնողներ: Ահա և Վեհափառ Հայրապետն, որի զգայուն սրտին մօտ էր իւր սիրեցեալ զաւակների թրշուառ կացութիւնը՝ անցեալ Ապրիլի 19-ին առանձին դրութեամբ դիմեց Կովկասի Փոխարքայ Նորին Պայծառափայլութիւն կոմս Վարանցով-Փաշկովին՝ և միաժամանակ էլ Արդարադատութեան նախարար Նորին բարձր վերազանցութիւն Շչեպլովիտովին «Խնդրելով արկանել առ ռոս Նորին Կայսերական Մեծութեան Մայրադոյն Պատրիարք Կաթողիկոսի ամենայն Հայոց ամենահպատակօրէն միջնորդութիւնը «Փաշակցութիւն» կուսակցութեանը մասնակցելու մէջ մեղադրուելու պատճառով դատապարտուածներին և քննութեան ու դատի ենթարկուածների ներման համար, որպէս անձանց, որոնք մտել էին նորա գործունէութեան շրջանի մէջ հայթուրքական ընդհարումներից յառաջ եկած ինքնապաշտպանութեան բացառիկ պայմանների շնորհիւ»: